ԳԼՈՒԽ Գ.

ԱՐԵՒՄՏԱՀԱՅՈՑ ԳՈՐԾԵՐԸ

Ասացինք արդէն, որ յեղափոխութիւնը չրջեց ամէն բան: Նոր դարագլուխ էր սկսւում:

Կովկասը, ինչպէս և ամբողջ Ռուսաստանը, խելայեղ թափով տօնեց բռնապետութեան անկումը: Հանդէսները, թափօրները, ժողովներն ու համագումարները իրար էին յաջորդում: Մամուլը արբեցած էր ազատութիւնից: Եւ ապադան ամենքին թւում էր այնպէս վարդագոյն: «Երբե՛ք, երբե՛ք, գրում էր «Հորիզոն»-ը մայիս 1-ի խմբագրականում, ապադան չի թացել մեզ այնպէս գեղեցիկ, յաղթութիւնը՝ այնքան մօտ, ինչպէս այսօր՝ յոյսի ու յոյզի այս երազ օրերին... Գահեր են խորտակւում ու չղթաներ քանդւում, և թագակիր աւազակները դողում են աշխարհի անողոք դատաստանի առջեւ»:

«Յոյսի ու յոյզի օրեր» էին, մանաւանդ մահւան տաղնապում գալարւող արեւմտահայութեան համար:

Ապրիլ 27-ին Ժամանակաւոր Կառավարութիւնը, յատուկ կարգադրութեամբ, որոշեց Թիւրքահայկական գրաւած վայրերի վիճակը, որ կատարելապէս համապատասխանում էր հայերի այն ժամանակւայ բաղձանքներին: Այդ կարգադրութիւնը, որ լոյս տեսաւ «Ժամ. Կառավարութեան Լրատու» պաշտօնաթերթի մէջ, հետեւեալն էր.

Ժամանակաւոր Կառավարութեան կարգադրութիւնը

Թիւրքահայաստանի մասին

Ժամանակաւոր Կառավարութիւնը, համաձայն յօդ. 42 և 43-ի Լահէի հոկտ. 5/18 կոնվէնցիայի ցամաքային պատերազմի օրէնքների և սովորոյթների մասին, մինչև խաղաղութեան դաշնագրով Թիւրքահայաստանի վիճակի վերջնական որոշումը՝ կարգադրեց.

Յօդ. 1. — Թիւրքահայաստանի հողը՝ Ռուսաստանի զօրքերի գրաւած քաղաքացիական կառավարութեան տեսակէտից՝ վերացւում է կովկասեան իշխանութիւնների, այլ և կովկասեան ռազմաճակատի զինուորական իշխանութիւնների տնօրինութիւնից և անմիջապէս ենթարկւում է Ժամ. Կառավարութեան:

Յօդ. 2. — Առաջին յօդւածում յիշած լիազօրութեանց, ինչպէս և Թիւրքահայաստանի չրջանների կառավարութեան 5 յունիս 1916թ. Ժամանակաւոր օրէնքով այս չրջանների ընդհանուր նահանգապետին յանձնւած